ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԸ ԵՎ ՖԵՐԵՆՑ ԼԻՍՏԸ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

XIX դարավերջին հայ մեծանուն երաժիշտներից շատերն ուսանել և կատարելագործվել են Եվրոպայի կոնսերվատորիաներում[1]: Կոմիտաս Վարդապետը նրանցից մեկն է: Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի բարձր հովանավորությամբ և նավթարդյունաբերող ու մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի կրթաթոշակով Կոմիտասը 1896 թ. հունիսի 15-ին հասնում է Բեռլին՝ ուսանելու Ռիխարդ Շմիդտի մասնավոր կոնսերվատորիայում և Ֆրիդրիխ Վիլհելմ Արքունական համալսարանում: Իր հետագա գործունեության ընթացքում ստեղծագործական կապեր է ունենում եվրոպական երկրների մայրաքաղաքների երաժշտասեր հասարակայնության հետ: Առաջադեմ Եվրոպայի մշակութային իրադարձություններով հարուստ կյանքը, ուսումնառության շրջանում կուտակած արժեքավոր գիտելիքներն ու բեռլինյան տարիների անմոռանալի տպավորությունները ժամանակի ընթացքում, անշուշտ, դառնում են Կոմիտաս Վարդապետի հետագա ուսումնասիրությունների նյութը: Բեռլինում Կոմիտասն ունեցել է երաժշտագիտական հարուստ գրադարան՝ Հենդելի, Հայդնի, Մոցարտի, Բեթհովենի, Վերդիի ու Վագների ստեղծագործությունների կլավիրներով[2]: Երաժշտության պատմությանը հայտնի է Վագներ-Լիստ՝ երկու արվեստագետների ստեղծագործական և բարեկամական կապը, «Ապագայի արվեստի» համար նրանց երաժշտության դարակազմիկ նշանակությունը, որը չէր կարող հայտնի չլինել Բեռլինում ուսանող, և Կոմիտասի նման պրպտուն միտք ունեցող երաժշտին:

1896 թ. ապրիլի 22-ին Կարապետ Կոստանյանին[3] ուղղած նամակում Կոմիտասը գրում էր. «Շնորհիվ ուսուցչապետիս (Ռ. Շմիդտ – Լ. Ս.), երաժիշտ գեղարվեստագետների մի ընդարձակ շրջան ունեմ, որպես և բավական բարձր ու պատվավոր, այս է, որ ինձ առավել խրախույս է ներշնչում, զանազան երաժշտական աշխատություններ ենք գրում և երեկույթ կազմում մասնավոր տներում, նվագում, քննում ենք գրվածքը և վիճաբանում»[4]: Միգուցե գեղագիտական - գաղափարական այդ «վիճաբանություններից» մեկում էլ Կոմիտաս Վարդապետի մոտ միտք է հղացել անդրադառնալ եվրոպական երաժշտության հսկաներին:

---

[1] *Այսպես, օրինակ, Տ. Չուխաճյանը՝ Միլանում, Ն. Տիգրանյանը՝ Վիեննայում, Գ. Ղորղանյանը՝ Լայպցիգում:*

[2] *Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն. Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրությունը.– «Սովետական արվեստ», 1969, - 11, էջ 24:*

[3] *Կարապետ Կոստանյան (1853–1920)– հայագետ, մանկավարժ, 1885-1891 թթ. եղել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի տեսուչը, Կոմիտաս Վարդապետի մտերիմ բարեկամը:*

[4] *Կ ո մ ի տ ա ս Վ ա ր դ ա պ ե տ. Նամականի, Երևան, 2009, էջ 33:*

Կոմիտասը, լինելով բացառիկ երաժշտականությամբ և նոր մտածողությամբ օժտված երաժիշտ, կարևորել է «Ապագայի երաժշտության» ջահակիր հանդիսացող գեղարվեստագետների նորարարական գաղափարները և խորապես ուսումնասիրել նրանց երաժշտության ինքնատիպությունը հաստատող առանձնահատկությունները: Դրա վկայությունն է Թիֆլիսի «Տարազ» շաբաթաթերթի 1904 թ. համարներում (-8, -19, -23) լույս տեսած Կոմիտաս Վարդապետի հոդվածները՝ նվիրված արևմտաեվրոպական երաժշտության խոշոր ներկայացուցիչներ Ռիխարդ Վագներին, Ջուզեպպե Վերդիին[5] և Ֆերենց Լիստին:

Գերմանական երաժշտական մշակույթի բազմակողմանի իմացությունը, այդ երաժշտության մեջ Լիստի ունեցած հսկայական նշանակությունը, հունգար կոմպոզիտորի առինքնող անհատականությունն ու ստեղծագործական նորարարական մղումները հետաքրքրել են Կոմիտաս Վարդապետին: Սակայն խորամուխ լինելով Կոմիտասի և Լիստի գիտական կենսագրության մեջ, բացի ասվածից բացահայտեցինք կենսագրական փաստերի որոշ նմանություններ և ընդհանրություններ, որոնք հնարավոր է վրիպած չլինեին նաև Կոմիտաս Վարդապետի նման հզոր ինտուիցիայի տեր արվեստագետի տեսադաշտից, կամ էլ հանդիսանային ևս մեկ շարժառիթ հունգարական ազգային դպրոցի դասականին անդրադառնալու համար: Անշուշտ, հնարավոր է գտնել տարաբնույթ նմանություններ հանճարների (մասնավորապես նախորդ դարաշրջանների) միջև: Սակայն Կոմիտասի և Լիստի միջև բավական շատ են առաջին հայացքից անհնարին թվացող, բայց իրականում գոյություն ունեցող աղերսները:

Երկու կոմպոզիտորները երաժշտության պատմության մեջ մտան որպես ազգային երաժշտության խոշորագույն ներկայացուցիչներ: Ֆ. Լիստի գործունեությունը նպաստեց ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորմանը: Կոմիտաս Վարդապետը հանդիսացավ հայ կոմպոզիտորական դպրոցի և երաժշտական գիտության հիմնադիր: Կոմիտասի ստեղծագործության հիմքում ժողովրդական երգաստեղծությունն է: Լիստն իր ուրույն մոտեցումն է ունեցել հունգարական ժողովրդական երաժշտության ճյուղերին (գեղջկական, քաղաքային)՝ նախապատվություն տալով քաղաքային ֆոլկլորին[6]:

Ե՛վ Լիստի, և՛ Կոմիտասի երաժշտագիտական հետազոտությունների հիմնական նյութն ազգային երաժշտության լեզվաոճական և արտահայտչամիջոցների (մեղեդի, հարմոնիա) առանձնահատկություններն էին, որոնք կիրառել են իրենց ստեղծագործություններում, անշուշտ, տարբեր ձևերով:

Կոմիտաս Վարդապետը ծավալել է կատարողական (խմբավար, երգիչ) գործունեություն՝ մեծ հաջողության հասնելով այդ բնագավառներում, յուրովի բացահայտելով երգչախմբի «լեզուն» և հնարավորությունները:

---

[5] *Հայ երաժշտագետներից առաջինը Վ. Կորգանովն է 1897 թ. անդրադարձել Ջ. Վերդիին՝ կենսագրական ակնարկով: Այն հրապարակվել է 1900 թ. Թիֆլիսում հրատարակվող* «Кавказский вестник» *ամսագրի 2-րդ համարում:*

[6] B. B a r t o k. Listz Musik und das Publikum unserer Zeit, 1911, neu veröff (t); Die ungarische Stileigentümlichkeiten in den musikalischen Werken Franz Liszts, B. – Lpz., 1931.

Ֆ. Լիստը, որն իր ժամանակի ականավոր դիրիժորներից մեկն էր, պատմության մեջ մնաց իբրև չգերազանցված, վիրտուոզ դաշնակահար, ով նորովի բացահայտեց «դաշնամուրի լեզուն» ՝ նոր հորիզոններ բացելով այդ բնագավառում:

Ե՛վ Կոմիտաս Վարդապետը, և՛ Ֆ. Լիստը իրենց լուսավորչական գործունեության մեջ կարևորում էին մանկավարժության դերն ու նշանակությունը ՝ կրթելով և դաստիարակելով երիտասարդ բազմաթիվ երաժիշտների[7]: Վայմարում 1879 թ. Ֆ. Լիստի մոտ է սովորել ծագումով իզմիրցի դաշնակահար և կոմպոզիտոր Ստեփան Էլմասը: Հայ երաժիշտն իր մեծահամբավ ուսուցչին հետագայում նվիրեց վեց էտյուդ[8]:

Ե՛վ Կոմիտաս Վարդապետը, և՛ Ֆերենց Լիստը հայրենասեր քաղաքացի էին ՝ մշտապես մտահոգ հայրենիքի ճակատագրով: Լիստն ապրելով և ստեղծագործելով Եվրոպայում, ունենալով համաեվրոպական ճանաչում, այդուհանդերձ, ջանք ու եռանդ չխնայելով ՝ 1875 թ. Պեշտում հիմնեց Հունգարիայում առաջին Երաժշտական Ակադեմիան:

Հայ շնորհաշատ երաժիշտների համար կոնսերվատորիա բացելու ծրագիրն ու բաղձալի ցանկությունը Կոմիտասին 1910 թ. բերեցին Կ. Պոլիս, որտեղ, սակայն, չկարողացավ իրականացնել իր մտադրությունը:

Երկու կոմպոզիտորներն էլ սերտ առնչություն ունեին եկեղեցու և հոգևոր երաժշտության հետ: 1865 թվականից Լիստը որպես աբբահայր հիմնականում ապրեց Հռոմում (կաթոլիկության օրրանը), ինչը հսկայական ազդեցություն ունեցավ նրա կյանքի ընթացքի և ստեղծագործությունների վրա: Լիստի կապը Ֆրանցիսկյան միաբանության հետ հնարավորություն էր ընձեռում ապրել աշխարհիկ կյանքով, զբաղվել գրական - գեղարվեստական գործունեությամբ, ինչպես նաև բարեգործությամբ: Լիստի հոգևոր երկերը ստեղծվեցին հենց այդ շրջանում: Հավելենք նաև, որ մեծ կոմպոզիտորի անվանակոչությունը (Ֆրանց, Ֆրանցիսկ) կապված էր հենց այդ միաբանության հետ, որի հավատարիմ հետևորդներից էր Լիստի լուսամիտ հայրը ՝ Ադամ Լիստը:

Հայտնի է Էջմիածնի հոգևոր ճեմարանի անուրանալի դերը Կոմիտաս Վարդապետի կյանքի և ստեղծագործական հասունացման ընթացքում: Հոգևոր կոչումը մեծապես նպաստում էր Վարդապետի Հայաստանում ծավալած բանահավաքչական աշխատանքներին և Եվրոպայում ունեցած համերգային, գիտական գործունեությանը:

Երկու արվեստագետներն էլ իրենց համերգային, լուսավորչական գործունեության զգալի հատվածը ծավալել են Եվրոպայի մայրաքաղաքներում: Ինչպես Կոմիտասը, այնպես էլ Լիստը օժտված էր երաժշտական նյութը մշակելու, տարբերակային զարգացման և բյուրեղացման ենթարկելու բնատուր տաղանդով: Ե՛վ անհատական ստեղծագործություններում, և՛ մյուս կոմպոզիտորների թեմաները մշակելիս Լիստը ցուցաբերում էր ինքնատիպ ու շատ սկզբունքային մոտեցում: Օրինակ ՝ Լիստի հայտնի

---

[7] *Լիստն ունեցել է շուրջ 380 աշակերտ և նրանց հետ մեծավ մասամբ պարապել է անվճար:*

[8] *Մ. Հարությունյան, Ա. Բարսամյան. Հայ երաժշտության պատմություն, Երևան, 1996, էջ 83:*

«Հունգարական Թագադրական Մեսսայի» հիմքում ընկած է առանձնահատուկ վարպետությամբ մշակված «Ռակոցի երգի» մոտիվները, իսկ հոչակավոր «Հունգարական ռապսոդիաների» հիմքում՝ 1840 թ. հունգար գնչուներից Լիստի լսած և գրառած հունգարական մեղեդիների «ներդաշնակումները» (ինչպես կբնորոշեր Կոմիտասը):

Լիստի ստեղծագործական սկզբունքները ձևավորվել են այլազգի երաժշտարվեստի առանձնահատկությունների բացարձակ իմացությամբ (ֆրանսիական, գերմանական), նա նաև հսկայական ներդրում ունեցավ չեխական, լեհական, նորվեգական երաժշտության տարածման գործում:

Կոմիտասի եվրոպական երաժշտության իմացությունը խարսխվում էր ազգային ու արևելյան երաժշտության արժանիքների յուրացման վրա: Նա բավականաչափ գործ է կատարել քրդական, թուրքական, հրեական[9] երաժշտության ուսումնասիրության համար:

Երկու կոմպոզիտորներն էլ առանձնակի վերաբերմունք և սեր են ունեցել գրականության ու փիլիսոփայության հանդեպ, ինչը հաճախ դրսևորվել է երաժշտության բովանդակության, երաժշտական ժանրերի ընտրության հարցերում:

Հրապարակախոսական գործունեությունը կազմել է իրարից շատ հեռու թվացող երկու արվեստագետների գործունեության կարևորագույն ոլորտը: Նրանք ճշգրտորեն զգում և արձագանքում էին երաժշտարվեստի հիմնախնդիրներին:

...Ժամանակի ընթացքում ստեղծվել է Կոմիտասի և Լիստի անձն ու գործը լուսաբանող հսկայածավալ գրականություն: Նրանց անդրադարձել են և՛ իրենց ժամանակակիցները, և՛ հետագա հետազոտողները:

Հայ արդի երաժշտագիտության մեջ Կոմիտասի մասին գոյություն ունի պատկառազդու գրականություն[10]: Լիստի գործունեության օրոք հրապարակված նյութերից արժեքավոր է նամականին (հրատարակվել է 1886 թ. Լա Մարայի կողմից), ինչպես նաև Պ. Տրիֆոնովի, Վ. Ստասովի և Ֆ. Լիստի աշակերտ Ա. Զիլոտիի հիշողությունները[11]: Գիտական արժեք են ներկայացնում նաև հունգար երաժշտագետ[12] Դ. Գաալի և ռուս երաժշտագետ, դաշնակահար, Բուդապեշտում Լիստի ընկերության պատվավոր անդամ Յու. Միլշտեյնի[13] մենագրությունները:

Կոմիտասի կենսագրության մեջ որոշակի դեր են կատարել հունգարացի երաժիշտները:

Վերն ասվեց, որ Կոմիտաս Վարդապետը 1896 թ. հունիսին ժամանում է Բեռլին: Նա ներկայանում է Արքունի կոնսերվատորիայի տեսուչ, հունգարացի

---

[9] *Հրեական երաժշտության կոմիտասյան տեսակետների մասին արժեքավոր տեղեկություններ է տալիս Մ. Գնեսինը. տե՛ս* «Коммунист» (Ереван), 5. IV. 1946.

[10] *Լ. Սահակյան. Կոմիտասագիտությունը հայ երաժշտագիտության մեջ, Երևան, 2010, էջ 145–166:*

[11] П. Трифонов. Ф. Лист. Очерк жизни и деятельности. СПб., 1896; В. Стасов. Письма великого человека.– Северный вестник, 1893; А. Зилоти. Мои воспоминания о Ф. Листе. СПб., 1896.

[12] Д. Гаал. Лист. М., 1986, с. 58.

[13] Я. Мильштейн. Ф. Лист, т. 1 и 2. М., 1956. *Երկհատոր այս մենագրությունը 1965 թ. հրատարակվել է նաև հունգարերեն:*

հռչակավոր ջութակահար, Ֆ. Լիստի մտերիմ բարեկամ Յոժեֆ Յոախիմին[14]: Հայտնի փաստ է, որ Կոմիտասը Յոախիմի խորհրդով է աշակերտում Ռ. Շմիդտին:

Կոմիտասի պոլիֆոնիկ արվեստը գնահատող մեծահամբավ արվեստա-գետներից էր ծագումով հունգարացի երաժշտագետ, փիլիսոփայության դոկտոր, բյուզանդական երաժշտության գիտակ, հետագայում Գ. Մահլերի և Ա. Շյոնբերգի արվեստի ուսումնասիրող Վ. Եգոնը:

Երկու արվեստագետների կյանքի և գործունեության վերը նշված զուգահեռները հնարավոր է նախապայման լինեին Կոմիտաս Վարդապետի համար՝ Լիստին անդրադառնալիս: Եվ Ֆ. Լիստին նվիրված՝ «Տարազ» շաբաթաթերթի 1904 թ. -23-ում տպագրված Կոմիտասի հոդվածը, անտարակույս, գիտական արժեք է ներկայացնում՝ այսօր էլ զարմացնելով բնորոշումների կոնկրետությամբ ու տեսակետների հիմնավորվածությամբ:

Իր փոքրածավալ հոդվածում Կոմիտաս Վարդապետը բավական մանրամասն և ըստ ժամանակագրության անդրադառնում է Ֆերենց Լիստի կյանքի ու գործունեության կարևորագույն փաստերին. մանկությանը, ուսուցիչներին, հունգար բարերարներին, առաջին ելույթներին և հաղթանակներին, աշխարհահռչակ ժամանակակիցներին (Պագանինի, Շոպեն, Բեռլիոզ), երաժշտալուսավորչական գործունեության կարևոր դրվագներին, կոմպոզիտորի ոճական առանձնահատկություններին, նորարարական միտումներին և ստեղծագործական այն նոր որոնումներին, որոնք կապված էին հոգևոր կոչման հետ: Կոմիտաս Վարդապետն իր հոդվածում ընդգծում է կենսագրական մի շարք փաստեր և կարևոր դրվագներ՝ Լիստ - արվեստագետի ձևավորման համար. «Երբ նա Վիեննայում հրաժեշտի նվագահանդեսը վերջացրեց, Բեթհովենը, որը հիացմամբ լսում ու ժպտում էր, շտապեց, բարձրացավ բեմի վրա և Լիստին համբուրեց»[15]: Այդ խոսուն դրվագին անդրադարձել են ոչ միայն Լիստի կենսագիրները, այլև ինքը՝ կոմպոզիտորը, որի համար դա ամենից թանկ ու նվիրական հիշողությունն էր: «Ծափահարությունների նոր ալիք: Եվ հանկարծ ակնթարթորեն լռություն տիրեց: Բեթհովենն էր բեմ բարձրանում: Մեծ երաժիշտը գրկեց ու համբուրեց պատանուն:

Եվ օվացիա... Դա արդեն ծափահարություն չէր, այլ ծափերի փոթորիկ:

Բեմահարթակին նրանք կանգնած էին կողք կողքի Բեթհովենն ու Ֆերենց Լիստը»[16],– գրում է Դ. Գաալը:

Իր հետագա շարադրանքում Կոմիտասն անթաքույց հիացմունք արտահայտելով Լիստի հանդեպ՝ գրում է. «1839-ին Լիստը մի նամակ գրեց Բոնն Բեթհովենի արձանի մասին հոգացող մասնաժողովին և հայտնեց, որ ինքն իր վրա է առնում պակասող (շատ մեծ) ծախսը»[17]: Սրանով նա ընդգծում է ոչ միայն Լիստի ազնվաբարո էությունը, այլ նաև նրա որոշակի ժառանգական կապը բեթհովենյան երաժշտարվեստի հերոսականության

---

[14] *Առ այսօր հայտնի չէ, թե Կոմիտասին ո՞վ էր խորհուրդ տվել ներկայանալ Յոժեֆ Յոախիմին:*

[15] *Կ ո մ ի տ ա ս. Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 180:*

[16] Դ. Գ ա ա լ. *Նշվ. աշխ., էջ 58:*

[17] *Կ ո մ ի տ ա ս. նշվ. աշխ., էջ 180:*

հետ: Կոմիտասն ասես ցույց է տալիս Լիստի մեծահոգությունը և Բեթհովենի մեծությունը:

Շատերին է հայտնի, որ 1823 թ. Ֆ. Լիստը հոր հետ Վիեննայից Փարիզ է գալիս՝ ընդունվելու Փարիզի կոնսերվատորիա: Լիստին նվիրված ուսումնասիրությունների հեղինակները պնդում են, որ նա չի ընդունվում Փարիզի կոնսերվատորիա օտարազգի լինելու պատճառով: «Մեզ նախազգուշացրել էին, որ կոնսերվատորիա իմ գալուն կխոչընդոտեին,– վերհիշում է Լիստը:– Մինչ այդ մենք չգիտեինք այդտեղ օտարերկրացիներին սովորել արգելող օրենքը: Քերուբինին առաջինը դա մեզ ասաց»[18]:

Փարիզի կոնսերվատորիայի տնօրեն, ազգությամբ իտալացի Լուիջի Քերուբինին, ով Փարիզի կոնսերվատորիան «համարում էր» միմիայն ֆրանսիացիների (ավելի շուտ փարիզեցիների) կրթօջախ, գերմանական հրեա Ֆ. Մենդելսոնին 1825 թ. սիրահոժար հրավիրում էր ուսանելու Փարիզի կոնսերվատորիայում: Լիստին նվիրված տարբեր աշխատություններում անհիմն մեկնություն ստացած կենսագրական այս փաստին միայն Կոմիտաս Վարդապետն է տվել շատ կոնկրետ և տրամաբանական բացատրություն. «Վիեննայից նրանք Փարիզ անցան (1823). հայրը փափագում էր, որ իր հանճարեղ որդին Փարիզի երաժշտանոցի լիակատար դասընթացն ավարտեր. բայց երաժշտանոցի տեսուչը Քերուբինին անսովոր տաղանդ ունեցող մանուկներին չէր սիրում, չընդունեց՝ պատճառ բերելով, թե օտարազգի է»[19]:

Տաղանդավոր երաժիշտները հաճախ են ընդվզել Փարիզի կոնսերվատորիայի ակադեմիզմի դեմ: Հայտնի է ֆրանսիական երաժշտական իմպրեսիոնիզմի հիմնադիր Կ. Դեբյուսիի ոչ ներդաշնակ ստեղծագործական փոխհարաբերություններն իր հարմոնիայի ուսուցիչ Դ. Է. Դյուրանի հետ[20]: Լիստի մտերիմ բարեկամ, ֆրասիական ռոմանտիզմի ցայտուն ներկայացուցիչ Հեկտոր Բեռլիոզը որոշակի հակասություններ է ունեցել (մասնավորապես, Բեթհովենի երաժշտության հետ կապված) այդ նույն կոնսերվատորիայի պրոֆեսոր Ֆ. Լեսյուեռի հետ. նմանատիպ օրինակները շատ են[21]: Փարիզի կոնսերվատորիայում չսովորելը չխոչընդոտեց Լիստի՝ իբրև երաժիշտ հետագա կատարելագործմանը: Փարիզի երաժշտասեր հասարակայնությունը ցնծությամբ էր դիմավորում երիտասարդ հունգարացու շոնդալից ելույթները:

Լիստի ստեղծագործական իրադարձություններով հարուստ կյանքում զգալի դեր ունեցան նրա հայրենակիցները. Շանդոր Թելեկին, Միխայ Վյորոշմարտին, Բարոն Միկլոշ Վեշելենին, Ալբերտ Ապպոնին՝ Լիստի կյանքում նյութական և բարոյական հսկայական աջակցություն ցույց տված անհատներ են, որոնց մասին վկայում է կոմպոզիտորի նամակագրությունը[22]:

---

[18] Я. М и л ь ш т е й н. *Նշվ. աշխ., հ. 1, էջ 68:*

[19] *Կ ո մ ի տ ա ս. նշվ. աշխ., էջ 178:*

[20] И. М а р т ы н о в. К. Дебюсси. М., 1964, с. 6.

[21] Г. Б е р л и о з. Мемуары. М., 1967, с. 46.

[22] Л а - М а р а. Ф. Лист, т. 1. М., 1886.

Հաճախ է անտեսվել հունգարացի բարերարների դերը Լիստի ստեղծագործական վաղ շրջանում և բազմաթիվ հետազոտողներ (մասնավորապես, խորհրդային շրջանում) ուղղակիորեն շրջանցել են Լիստի ստեղծագործական կենսագրության այդ կարևորագույն փաստը: Կոմիտասը ոչ միայն անդրադառնում է նրանց, այլև նշում Լիստին հատկացվող գումարի չափը («600 գուլդեն») և ժամկետները «գեղարվեստագետ և վարպետ դաշնակահար» դառնալու համար: Հավանաբար, այս տեղեկությունը Կոմիտասը վերցրել է գերմանական մամուլից՝ այնտեղ ուսանելու տարիներին:

Բաց չթողնելով կենսագրական ոչ մի մանրամասն՝ Կոմիտաս Վարդապետը անդրադառնում է քաղաքական և գաղափարական այն մթնոլորտին, որում ձևավորվել է Լիստի հուժկու անհատականությունը. դա Հուլիսյան հեղափոխությունն էր, Փարիզի լուսամիտ մտավորականների հետ ունեցած անձնական շփումներն էին և, անշուշտ, ռոմանտիկական երաժշտության ջահակիրներ Պագանինիի և Բեռլիոզի հսկայական ներգործությունը, որն իր ստեղծագործության վրա որոշ շրջանում կրեց Լիստը:

Շեշտելու համար Լիստի արվեստի նորարարական և ինքնատիպ բնույթը, Կոմիտաս Վարդապետը կանգ է առնում նրա երաժշտության ամենահատկանշական ու առանցքային կողմի՝ ծրագրայնության վրա:

Լիստը՝ որպես ցայտուն ռոմանտիկ, իր ստեղծագործության մեջ կարևորում էր ծրագրայնության դերը, նա ուներ գործիքային երաժշտության միջոցով գեղարվեստական, գրական կերպարների վերարտադրման իր սկզբունքները, իր յուրատիպ՝ ընդհանրացված ծրագրայնությունը: Կոմիտաս Վարդապետը ռոմանտիկների (Լիստ, Բեռլիոզ) ստեղծագործական սկզբունքը բնորոշում է այսպես. «Երիտասարդ երաժիշտ Լիստը համոզված էր, թե պետք է երաժշտությունը բանաստեղծական մտքեր վերարտադրի, և Բերլիոզի հետ ձեռք-ձեռքի տված՝ նախանձախնդիր եղան ծրագրող, այսինքն՝ նկարող երաժշտություն (programmusik)*»[23]: Լիստի ծրագրային երաժշտության ընդհանրացված դրսևորումների համար Վարդապետի օգտագործած «նկարող» բառն առավել քան բնորոշում և բնութագրում է կոմպոզիտորի ստեղծագործական սկզբունքը. «նկարել–տալ ներկայացնել գաղափարը, կերպարը»[24] (ընդգծումը մերն է – Լ. U.):*

Լիստի ստեղծած (Simphonische Dichtungen) *«Սիմֆոնիկ պոեմ» ժանրում գաղափարն ու կերպարայնությունը ձեռք էին բերում հիմնական նշանակություն: Վերածննդի գործիչ Լեոնարդո դա Վինչիի բնորոշմամբ՝ «Գեղանկարչությունը քնարերգություն է, որը տեսնում են, իսկ քնարերգությունը՝ գեղանկարչություն, որը լսում են»[25]: Գեղանկարչական այս քնարերգությունն էր, որ հաճախ Լիստը «նկարում էր» երաժշտական հնչյունների օգնությամբ, նվագախմբի և առանձնապես դաշնամուրի միջոցով: «Լիստը դաշնակահարների արքան է»,– գրում է ռուս երաժշտական գործիչ և կոմպոզիտոր Յու. Վիելգորսկին[26]:*

---

[23] *Կ ո մ ի տ ա ս. նշվ. աշխ., էջ 179:*

[24] *Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1977, էջ 456:*

[25] *Ն. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հուշ-սերերի մի կապոց… (բանաստեղծություններ և նկարներ), Երևան, 2004, էջ 1:*

[26] Я. М и л ь ш т е й н. *Նշվ. աշխ., հ. 1, էջ 390:*

Լիստ-դաշնակահարի մասին հյուսվել են առասպելներ: Ժամանակակիցները, որոնցից էր և Յու. Վիելգորսկին, ով Լիստին առաջինն է ծանոթացրել ռուս ժողովրդական երաժշտությանը, զարմացած էր Լիստի կատարողական վարպետության վրա: Ունկնդիրներից շատերն էին նշում, թե ինչպես էր Լիստը ազատ օգտագործում, օրինակ՝ դեցիմաներ, պահպանելով հնչողության հավասարությունն ու մաքրությունը: Լիստի դաշնամուրային կատարողական առանձնահատկությունները մանրամասն քննարկված են Յա. Միլշտեյնի վերը նշված մենագրության երկրորդ հատորում:

Կոմիտաս Վարդապետն իր փոքրիկ հոդվածում, մի քանի նախադասությամբ, բայց շատ դիպուկ անդրադառնում է Լիստի գործունեության կարևորագույն բնագավառին՝ շեշտելով կոմպոզիտորի տեխնիկական-կատարողական անսահման հնարավորությունները, կապված, մասնավորապես, մատադրության և ազատ թռիչքների հետ (այսպես ասած՝ դեցիմաները). «Լիստը լրացրեց իր նվագածության թերին (մատների լարումն ու թռիչքը)»[27]:

Հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ Կոմիտաս Վարդապետի այս հոդվածում անդրադարձ է արվում բելգիական և ֆրանսիական երաժշտագիտական ու երաժշտական քննադատության դպրոցի հիմնադիրներից մեկին՝ Ժոզեֆ Ֆետիսին (ավելի ճիշտ՝ Ֆետիին): Վերջինիս աշխատություններին Կոմիտաս Վարդապետը վաղուց ծանոթ էր: Դեռ 1895 թ. (Բեռլին մեկնելուց առաջ) Կոմիտասը Կ. Կոստանյանին խնդրում է Գևորգյան ճեմարանի մատենադարանից իրեն՝ Թիֆլիս, ուղարկել Ֆետիի հինգ հատորյակը[28]: Ֆետին առաջին երաժշտագետներից էր, ով զբաղվել է երաժշտական գեղագիտության հարցերով, ինչպես նաև էթնոերաժշտագիտությամբ (մասնավորապես, ոչ եվրոպացի ժողովուրդների քաղաքակրթությամբ): Եվրոպային հայտնի էր Ֆետիի «Համընդհանուր երաժշտության պատմություն» (մինչև XV դար) ("Histoire gننرale de la musique depuis les temps les plus anciens jusqu' Ո nos jours") հիմնավոր աշխատությունը (5 հատորով), ինչպես նաև հարմոնիայի ծագմանն ու զարգացմանը նվիրված «Ակնարկ հարմոնիայի պատմության՝ իբրև արվեստ և իբրև համակարգված գիտություն» ("Esquisse de l'histoire de l'harmonie considننre comme art et comme science systننmatique") ուսումնասիրությունը:

Կոմիտասն իր հոդվածում գրում է. «Երաժշտության հայտնի պատմագիր Ֆետիսը 1882 թվին երաժշտական փիլիսոփայական մի բանախոսություն արավ, որի մեջ նորագույն ձայնաելևէջների առավելությունն ու ապագան բացատրեց: Այս բանախոսությունը Լիստին ոգևորեց, նոր, թարմ միտք ներշնչեց, և նա սկսավ բազմակողմանի, կենդանի և ազատ ոճով գրել, որ և հետո գերմանական նոր դպրոցի բնորոշ հիմքն եղավ»[29]:

Լիստի գիտական կենսագրության մեջ այս փաստն արձանագրված և ուսումնասիրված չէ: Հայտնի չէ նաև, թե գիտական որ սկզբնաղբյուրն է դարձել այդ տեղեկության նյութը: Վարդապետը չի նշում, թե կոնկրետ որ

---

[27] *Կ ո մ ի տ ա ս. նշվ. աշխ., էջ 179:*
[28] *Խ. Ս ա մ վ ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 19:*
[29] *Կ ո մ ի տ ա ս. նշվ. աշխ., էջ 180:*

բանախոսությունն է Լիստի վրա թողել այդչափ մեծ տպավորություն, բայց, մեր կարծիքով, խոսքը վերը նշված և 1840 թ. Փարիզում հրատարակված Ֆետիի՝ հարմոնիայի վերաբերյալ ուսումնասիրության մասին է: Ֆետին, ով Բեռլիոզի գաղափարական հակառակորդն էր, ըստ երևույթին, դարձել էր Լիստի գաղափարակիցը՝ Եվրոպային անհայտ իր քաղաքակրթությունների ուսումնասիրությամբ, ազգային երաժշտության ազատ մտածողությունից բխած նոր հարմոնիկ լեզվի իր բացահայտումներով:

Խորամուխ լինելով Կոմիտասի հետագա շարադրանքում՝ կարդում ենք ևս մեկ կարևոր միտք, այն, որ Լիստը Վայմարում ձևավորեց գերմանական նոր երաժշտության դպրոց. «Վայմարը շատ շուտ մի կենտրոնական ժողովատեղի եղավ առաջնակարգ երաժշտական տաղանդների համար (Ռաֆֆ, Բյուլով, Թաուզիկ, Կորնելիուս և ուրիշներ) և հյուսիսային գերմանական դպրոցի առաջնաբերդը դարձավ»[30]:

Կոմիտասյան տեսակետների մեջ ծայրահեղության մեջ չընկնելով՝ մենք, այդուհանդերձ, չենք կարող չզարմանալ Մեծ երաժշտագետի ընդգրկումների խորությամբ, բնորոշումների գիտական հիմնավորվածությամբ, մտածողության և գրելաոճի ինքնատիպությամբ: Կոմիտաս Վարդապետի դիպուկ ու ճշգրիտ եզրահանգումների հիմքում մշտապես ընկած է երաժշտական բացառիկ օժտվածությունն ու ինտուիցիան, երաժշտարվեստի առանձնահատկությունների համակողմանի իմացությունն ու ժամանակը զգալու կարողությունը: Վարդապետի մտքերը, երաժշտական գործիչներին տված արժեքավոր գնահատությունները (անգամ հպանցիկ արված կարծիքը) ժամանակի մեջ ձեռք են բերում ծրագրային նշանակություն: Ֆ. Լիստին նվիրված Կոմիտասի փոքրածավալ հոդվածը բովանդակում է մի ողջ հետազոտության նյութ: Առաջինն անդրադառնալով հունգարացի երաժիշտ Լիստին՝ Կոմիտաս Վարդապետը հնարավոր ամբողջությամբ կարողացել է ընդգրկել կոմպոզիտորի բազմաբեղուն կյանքի կարևորագույն դրվագները, երաժշտության ինքնատիպությունը փաստող արժանիքները: Կոմիտասը զարմացնում է ոչ միայն հայերենի իր խոր գիտելիքներով, այլև ֆրանսերեն, գերմաներեն լեզուների իմացությամբ: Նա հայ առաջին երաժշտագետն է, որը աշխատում է վերնագրերն ու անվանումները զետեղել բնագրի լեզվով (կարևոր սկզբունք արդի երաժշտագիտության մեջ), երաժշտագետ, ով աչքի է ընկնում իր ժամանակի համար նոր և առաջադեմ մտածողությամբ: Կոմիտաս Վարդապետը համարձակորեն հայտնում է տեսական կարևոր մտքեր և կարողանում տրամաբանորեն հիմնավորել իր դրույթները:

2011 թ. լրանում է հունգար դասականի ծննդյան 200-ամյակը: Այս իրադարձությունն առիթ եղավ անդրադառնալու Կոմիտաս Վարդապետի և Ֆերենց Լիստի՝ ազգային երաժշտական դպրոցների խոշորագույն ներկայացուցիչների առնչություններին:

Վերջում նկատենք. Ֆ. Լիստին տված Կոմիտասի ստորև բերվող գնահատությունը լիովին կհամապատասխաներ նաև Վարդապետին. «Լիստն

[30] *Նույն տեղում, էջ 181:*

ազնիվ քաղաքացի, անդուլ երաժիշտ և բարի քրիստոնյա եղավ իր ամբողջ կյանքի ընթացքում»[31]*:*

КОМИТАС ВАРДАПЕТ И ФЕРЕНЦ ЛИСТ

ЛУСИНЕ СААКЯН

Р е з ю м е

Известно, что значительная часть обучения и дальнейшая музыковедческая деятельность основоположника армянской композиторской школы Комитаса (1869–1935) была связана с Европой. Творческие взаимоотношения армянского композитора с действующими музыкантами Европы явились стимулом для новых исследований, в которых выявляется взаимосвязь со знаменитыми европейскими композиторами. Комитас Вардапет как художник имеет некоторую схожесть и общность с венгерским композитором Ф. Листом (1811–1886). Деятельность двух композиторов в становлении и утверждении национальной школы имела эпохальное значение. Комитас и Лист были наделены новым мышлением и стилем письма, берущими свои истоки из национальной музыки. В одном из номеров еженедельника «Тараз» за 1904 г. Вардапет довольно подробно осветил достоинства творчества Листа. Небольшая статья Вардапета содержит целый научно-иследовательский материал, поражая глубокими познаниями и многосторонним охватом затрагиваемых вопросов.

KOMITAS VARDAPET AND FERENTS LIST

LUSINE SAHAKYAN

S u m m a r y

It is known, that the influential part of education and future musicological activity of the founder of Armenian composer’s school Komitas (1869–1935) was connected with Europe. The relationship of Komitas with famous composers and musicians of Europe presents a real ground for new investigations and research. Komitas Vardapet as an artist had some similarities with Hungarian composer Ferents List (1811–1886). The activities of two composers had a crucial meaning in the formation and development of national music school. Komitas and List had unique thoughts and individual writing style, which derived from national music. In one of the issues of “Taraz” newspaper, published in 1904, Vardapet illustrated and highlighted in details the obvious values of List’s works. The article stated the scientific viewpoints of Vardapet and his thoughts, which gain considerable project importance during the time.

[31] *Տե՛ս նույն տեղում, էջ 181:*